ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ· ՆԻՒ ԵՈՐՔ, ԱՊՐԻԼ 1, 1896· ԹԻՒ 4 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 113

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M D. 202 West, 23d St., New York, N. Y. Vol. VI, 1896.

ՌՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Խմբագրական Նշմարք.— Ցուսոյ Նշոյլ.— Զէյթունի մեծ ծակատամարտն—Նամակ Շփիկէն. Նահատակ Քառասունք·— Նամակ Կ. Պոլսէ.— Մարաշի կոտորածն.—Մահմետական Համաժողովն.—Հայ Ամերիկացւոց վնասներուն դատն.— Նոր հրատարակութիւնք.— Այլևայլ·

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՇՄԱՐՔ

Հեռագրական լուրերուն մէջ քան զամենայն չարագուշակն, եթէ ճշմարիտ է, այն է որ կը ծանուցանէ թէ Ռուսիոյ կառավարութիւնն ևս ճնշում ի գործ կը դնէ ստիպելու զՊատրիարք Իզմիրլեան ի հրաժարել։ Ինչ՞ կրնայ լինիլ յայսմ Ռուսիոյ շարժառիթն, դժուար է գուշակել։ Ի հարկէ Հայոց ծառայութիւն մի մատուցանելու նպատակաւ չի կրնար լինիլ։ Ռուսիա պէտք է գիտնայ որ եթէ պետական հարուածով մի Իզմիրլեան գահընկէց լինի, հայ ժողովուրդն, մանաւանդ ի Կ·Պոլիս, պիտի կատաղի յանսահատութենէն, ինչ որ կարող է ահաւոր խառնաշփոթութեանց պատճառ լինիլ մայրաքաղաքին մէջ։ Եթէ Ռուսիա դիտաւորութիւն ունի իւր լէգէոններն ի Կ·Պոլիս մուծանելու ի պաշտպանութիւն Սուլթանին՝ հասկանալի է որ լաւ առիթ մի փնտռէ, և Պատրիարքական գահուն բռնաբարումն կրնայ այդ առիթն ընծայել շնորհիւ ահաւոր ժխորումներու որք այդպիսի բռնաբարման մի անհրաժեշտ հետեւանքն կը լինին։ Զեմք ուզեր յոռետես լինիլ և ոչ ունիմք մասնաւոր տեղեկութիւն ունիմք ռուսական դիւանագիտութեան նորագոյն ձգտմանց նկատմամբ, պարզապէս կը տրամաբանեմք։ Մինչև ե՞րբ մեծ տէրութիւններ Հայոց արեան զնովն ձեռք բերեն իրենց շահեր։ Ինչո՞ւ սակաւիկ մի հանգիստ չեն թողուր մեզի ...։ Զեմք ուզեր սակայն ուելի յառաջ երթալ, հեռագիրն կրնայ սխալ լինիլ։

***

Ուստրիէն հայ տիկին մի կը գրէ մեզ յոյժ շահեկան նամակ մի· լեգուն պարզ, միտքն յստակ, զգացումներն ազնիւ։ Ի միջի այլոց կ'ասէ, ըստ երեւոյթին միամիտ, բայց իրօք խորիմաստ սա խօսքն· «Չիտակ դպրոցի տղայոց խաղալիկ դարձուցին ասանկ ծանր խնդիր մը, ան ալ մահու և կենաց խնդիր մը։» Տիկինն Հընչակեանց կ'ակնարկէ և գառնապէս կը գանգատի։ Բնական է որ այս գանգատ շատ տեղեր զգացուած է վերջին ամիսներըս, այլ քիչերէ արտաբերուած։ ՀԱՅԿ, օրինակի համար, երկար ամիսներէ ի վեր քննադատած չունի զՀնչակեան կուսակ-

ցութիւնն, և այս մասին Թղթակիցք ոմանք զարմանք կը յայտնեն մեզ։ Բացատրենք թէ վասն է՞ր հրաժարեցանք քննադատելէ։ Նախ՝ վասն զի անիրաւութիւն կը լինէր քննադատութեամբք այն տպաւորութիւնն յառաջ բերել իբր թէ հայկական վերջին արհաւիրք լոկ Հնչակեանց կամ մանաւանդ Հնչակի մոլոր ընթացքին պտուղն էին։ Երկրորդ՝ վասն զի ՀԱՅՔ իւր հակահնչակեան քննադատութիւններ չատոնց և կրկին ու կրկին արած էր արդէն անդստին ի 1893է, ցոյց տալով Հնչակեան քաղաքականութեան և ընթացքի ողբալի հանգամանքն թէ ազգային և թէ միջազգային տեսակէտէ։ Քննադատութիւն մի պարտի որչափ որ կարելի է չարխափան հանգամանք ունենալ և ուստի բարեպատեհ ժամուն լինել։ Ի՞նչ օգուտ է իրաց ներկայ անզսպելի ընթացքին մէջ քննադատել զՀնչակ։

Աւելցնեմք և զայն թէ քան զամենայն իմաստուն քննադատութիւնն անգամ յոչ ինչ կը ծառայէ եթէ միայն ժխտական է։ Յիշելի է թէ ՀԱՅՔ հինգ տարի շարունակ աղաղակեց թէ վնասակար ուղղութեամբ բայց գինովցածի համարձակութեամբ գործողներն եթէ ոչ ուղղելու գէթ զսպելու համար հարկ էր արտասահմանեան Կեդրոնական Յանձնախումբ մի կազմաւորել, որ իւր մեծագոյն հեղինակութեամբ կարենար երիտասարդաց եռանդն ի բարին գործածել և միանգամայն միջազգային դիւանագիտութեան ազդել։ Մեր այս փաստ բաւական կարեւորութիւն չստացաւ բանիմաց ազգայնոց քով, թող զանիմացս։ Բանիբուն համարուածներէն ոմանք սաստիկ հակառակեցան, այլք, առերեւոյթս հաւանութեան քօղի տակ պատրուակեցին իրենց հակառակութիւնն. և Կեդրոնական Յանձնախմբի գաղափարն մնաց գաղափար։

Այս խորհրդածութենէն կը հետեւի թէ ազգին նոյն իսկ մշակուած դասերուն մէջ, ընդհանուր անպատրաստութիւն կար զՀայկական Խնդիրն ըստ արժանւոյն վարելու, և զայն վարեցին անոնք գլխաւորապէս, որք, ինչպէս մեր Թղթակից Տիկինն կ'ասէ, «Դպրոցի տղայոց խաղալիկ» կարծեցին, այսինքն ընկերվարական գրքերէ և յեղափոխական հայեցողութիւններէ արբեցած չորս հինգ երիտասարդներ ժպրհեցան իրենց գաղափարըն կամ տեսութիւնն Հայաստանի մէջ իրագործել ո՛և է գնով, ի՛նչ և իցէ միջոցով, յախուռն, ընդ խոլ։

Այդպիսի գործիչներէ որքան տարբեր են Խրիմեանի և Իզմիրլեանի նմաններն որք ազգին ցաւերուն ցաւակից, նորա վէրքերով վիրաւորուած կ'աշխատին ամենայն երկիւղածութեամբ բարուոքել նորա վիճակ, ոչ թէ խենթն ի խենթն ի գործ դնել տկար ազգին վերայ այս կամ այն վերացական գաղափարն։

***

Շնորհակալութեամբ ստացած է խմբագրութիւնս 100 Ֆրանք ի Տիար Յ. Իսկէնտէրէ, 100 Ֆրանք ի Տիար Ռ. Մարկոսեանէ, Բարիզէն, ի նպաստ Հայքի հրատարակութեան։ Նաև 200 Ֆրանք Կ. Պոլսէն, հայրենասէր խմբի մի մէջ հանգանակուած։

Հեռուէն եղած այս քաջալերութիւններն տեսնելով մեր Ամերիկայի հայ գաղթականութեան նորէն հրաւէր կը կարդամք որ թօթափեն իրենց անտարբերութիւն և բաժանորդ գրուին ՀԱՅՔի։ Մինչև ցարդ կ'ասէինք թէ 400 պէտք է լինի Ամերիկայի բաժանորդաց թիւն որպէս զի ամիսն երկու անգամ հրատարակել կարենամք. այժմ կը ծանուցանեմք թէ 300 միայն եթէ լինի, 15 օրն անգամ մի պիտի լոյս տեսնէ ՀԱՅՔ։ Եթէ մինչև Մայիս 1 այդ թիւն լենայ այնուհետեւ 15 օրեայ կը լինի Թերթս։ Մեր գաղթականութեանց առաջնորդներուն և բանիմաց անդամներուն յատուկ ուշադրութիւնն կը խնդրեմք այս խնդրոյն։ Եթէ ուզեն կըրնան 15 օրէն կատարել այս գործ։

ԱՌ ՊՈՒԼԿԱՐԱԲՆԱԿ ԲԱԺԱՆՈՐԴՍ

«ՀԱՅՔԻ»

Կը խնդրուի Պուլկարաբնակ մեր պատուարժան բաժանորդներէն և բաժանորդ գրուիլ փափաքողներէն որ հաճին փութալ իրենց թէ' անվճար մնացած և թէ' 1896 տարւոյ բաժանորդագներն հատուցանել հանդիխս գործակալ Տիար Գ. Տէօքմէճեանի ի Ռուսչուք։

ՅՈՒՍՈՅ ՆՇՈՅԼ

Հայոց համար խրախուսիչ է դիտել Անգլիոյ մերձեցումն Երրեակ Դաշնակցութեան։ Նշաններ կան ցուցնելու թէ կըզգիացեալ Բրիտանիա՝ բերմամբ հարկին՝ եղեր է Գերման-Աւստրօ-Իտալեան Դաշնակցութեան եթէ ոչ մէկ անդամն գէթ աջակիցն։ Տարիէ մ'ի վեր է որ գրեթէ շարունակ դիւանագիտական պարտութիւն կը կրէ Անգլիա յերեսաց Ռուսընդ-Ֆռանս միութեան՝ թէ՛ ի Ծայրագոյն արեւելս թէ՛ ի Կ. Պոլիս։ Գերմանիա ևս ամենատիւ երկեակին օգնեց ընդդէմ Անգլիոյ՝ որպէս զի վերջինս՝ զգալով իւր մենութեան բովանդակ անտեղութիւնն՝ հարկ համարի երրեակին միանալ։ Եւ ահա յայդ եկած կը թուի Անգլիա։ Իտալիոյ տագնապեալ ձեռնարկն յԱպիսինիա կը գտնէ բրիտանական օգնութիւն այն զինուորական շարժմամբ զոր Անգլիա կը յղէ Եգիպտոսէն ընդդէմ Տէրվիշներու սպառնալից ուժերուն։ Երրեակ Դաշնակցութիւնն կը հաւանի որ եգիպտական այդ արշաւանքին նուիրուի եգիպտական պարտուց արկղէն խնդրուած գումարն, որով Ռուսֆռանսական առարկութիւնն անզօր կը մնայ։ Այս է առաջին յաղթանակն զոր Մեծն Բրիտանիա կը տանի երկեակին դէմ, շնորհիւ իւր բարեկամական՝ եթէ ոչ ձեւական՝ միութեան երրեակին։ Ինչ պիտի լինի յաջորդ յաղթանակն։ Անհաւանական չէ որ յաջորդ յաղթանակն լինի օսմանեան հողոյն վերայ՝ վերաբերութեամբ Հայկական խնդրոյն։ Զհայս պաշտպանելու մէջ Անգլիոյ վրիպումն յոյժ անպատուաբեր եղաւ բրիտանական անուան, և ռուսական ազդեցութեան տուաւ գերակշիռ դերն ի Կ. Պոլիս։ Անգլիա որ երկար ամիսներ պարզմտութեամբ վատնեց անցեալ տարի Ռուսիոյ և Ֆռանսայի հետ գործակցութեամբ բարեկարգութիւններ մուծանելու ի Հայաստան, և հաց ուզող Հայաստանի օձ տրուեցաւ, շատ յոյս կայ որ հիմակ Գերմանիոյ, Աւստրիոյ և Իտալիոյ հետ իրական գործակցութեամբ յաջողի Հայաստանի համար միջոցարական օրեր ծագել— գոնէ ողջ մնացողներն փրկել անապահով, մահահոտ ամենաթշուառ վիճակէն։

Մաղթենք ուրեմն որ ճշմարտուի շուտով թէ Երրեակ Նիզակակցութիւնն Քառեակի վերածուեր է յաւելմամբ Մեծին Բրիտանիոյ, որով թէ նաւային և թէ դըրամական ուժերով այնքան գեր ի վեր կը հանդիսանան չորսն որ առանց պատերազմի, լոկ դիւանագիտական ճնշում ի գործ դնելով, կը զօրեն անյետաձգելի ինչ ինչ խնդիրներու լուծում տալ։

Իսկ մեզ Հայոցս կը մնայ յուսալ, նորէն յուսալ և միշտ յուսալ։ Ցուսահատութիւնն անձնասպանութիւն է։

Ցուսոյ նշոյլն ողջունեցէք, Հայեր, և ակնկալեցէք փրկութեան պայծառ առաւօտուն։

ԶԷՅԹՈՒՆԻ

ՄԵԾ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՆ

Մարաշ, 30 Դեկտ. 1895

Զէյթունի մէջ յեղափոխականներ ժամանակէ մ'ի վեր կը գործէին, բայց երբ լուր եկաւ թէ բարեկարգութեան ծրագիրը ստորագրուած էր Սուլթանէն, հրաման ստացան գործիչք իրենց պետերէն չանել ոևէ ապստամբական շարժում։ Ցետոյ, Մարաշի մէջ չփոթութեանց ըսկիզբներն, Զէյթուն առաւ Թրքաց ամրութիւններն և գերի բռնեց 400 զօրքն։ Այս լսելով զարմացանք մեք, և դեռ չեմք հաւանար զայն։ Բայց ցուցում կայ թէ Զէյթունցիք ոտքի ելան գուշակելով թէ ջարդ կը սպառնայր և իրենց։ Քանի որ հայ վարժապետ մի ընդհանուր կոտորածէն ամիս մի յառաջագոյն կրցած էր իրազեկ լինիլ կառավարութեան դիտմանն, դիւրին է հաւատալ թէ ունէին թուրք պաշտօնակալ մի ի վարձու, որ ծանուցանէր իրենց ամեն ինչ որ տեղի կ'ունենար։ Բաց աստի, ճիշդ յառաջ քան զյարոյթն, Զէյթունի մէկ Թրքին կողմէն գրուած նամակ մի ինկած էր Քրիստոնէի մի ձեռքն հոս, յորում պատմուած էր թէ դիտում կայ Զէյթունն հիմնայատակ աւերելու։ Զէյթունի վրայ 34 հազար զօրք գնաց, և հինգ տարբեր կողմերէ գործել սկսաւ։

Իբր 10 օր առաջ ծանր մարտ տեղի ունեցած է մերձ ի Զէյթուն։ Ցարձակող մահմետական բանակն սոսկալի պարտութիւն կրելով նահանջեցին։ Օրերով տեսանք անհամար նահանջողներ որք սորմելի կերպով ի Մարաշ կը վերադառնային, և հարիւրաւոր վիրաւորներ դեռ կուգան։ Ոմանք կը կարծեն թէ 10,000 Թրքեր սպաննուած են, և 1,500 վիրաւորուած են։ Զէյթունէն վերադարձած զինուոր մի փողոցին մէջ պատմեր էր լու ի լու «Ա՛, Զէյթունցիք մեր վրայ եկան անձրեւի նման։» Պաշըպօզուքներու մեծ խումբ մի գիշերային շփոթած՝ զիրար ըսպաննած են բոլոր ուժով։ Կ'ասեն թէ հրամանատարն, Ֆէրիք փաշա, նոյնպէս սպաննուած է։ Աւարառուներու մեծ վոհմակ մի Մարաշէն գնացած էր պատրաստ լինելու քաղաքին առման պահուն։ Ի Միասին տարած էին բեռներով կացին և այլ գործիներ սրպէս զի քաղաքին մէջ պեղումներ անելով պահուած գանձերն գըտնէին։ Կը զրուցեն թէ հրամանատարն զանոնք դրած է բանակին ճակատն, ուր խստի պէս հնձուած են։ Այսպէս երկիրն կը մաքրուի։ Մարդիկ կը պատմեն թէ ինչպէս 30 տարի առաջ 30 հազարէ բաղկացած բանակ մի գնած ի Զէյթուն և վերադարձաւ նմանօրինակ կերպով։

ՆԱՄԱԿ ԱՐԱԲԿԵՐՈՒ ՇԵՓԻԿ ԳԻՒՂԷՆ

ՆԱՀԱՏԱԿ ՔՐԻՍՏՈՆԵԱՅՔ

(Այս նամակ որում ծանօթացանք միսիոնարի մի շնորհիւ, իւր պարզութեան մէջ աննման նկարագիր մ'է այն զարհուրելի եղանակին որով իսլամ խուժանն գործեր է իւր աւերանք անցեալ աշուն։)

Կողոպտիչ վոհմակն, կասէ Թղթակիցըն, որ յարձակումն գործեց մեր վերայ, ի գլուխ իւր ունէր զՍարու-Զիչէքլի Քիւրդ Օղլուն։ 400 զինեալ մարդիկ էին որ մինչև կէս օր կրակ արին մեր գիւղին վերայ։ Ապա մեր երևելիներէն ոմանք գնացին իմանալ թէ ինչ էր այս հրացանաձգութեան նպատակն։ Ցետ խորհրդակցութեան՝ յարձակողք պահանջեցին 100 լիրա իբրև փրկանք, Յարին զայդ [illegible] գումար, բայց չմեկնեցան։ Եւ ասին մեզ— Պէտք է մեզ տաք ձեր ժամացոյցներն ալ։ Տուինք զայնս, և սակայն չգնացին։—Պէտք է մեզ յանձնէք ձեր զէնքերն ևս, ասին։ Տուինք և զայնս, սակայն և այնու գոհ չեղան։ «Հիմա պէտք է առնունք ձեր ցորենն, եզներն և առջառներն։» Առին զայդ ամենն, տակաւին չյագեցան։ «Այժմ ձեր տուներըն պիտի որոնեմք և ինչ որ գտնեմք մեզի հաճելի, պիտի առնումք։» Եւ այնպէս արին, և բոլոր ինչ որ արժէքաւոր էր, տարին։

Երբ գիշեր եղաւ, խորհեցանք թէ վըտանգն անցած էր, և թէ գէթ մեր անձերն ապահով էին, այլ ի զուր։ Հետևեալ առաւօտուն Թրքերն շրջակայ գիւղերէն եկան մեր վերայ և սպառնացան զմեզ ըսպաննել եթէ մեր տներէն չհեռանայինք։ Ուստի մենք դուրս ելանք, և ինքեանք ներս մտնելով կողոպտեցին անգամ մ'ալ։ Ութ օր զբաղեցան մեր տներն դատարկելու և ապա հրդեհելու։ Միայն 10 կամ 12 տուն, աղքատիկներէն, չայրեցին, բայց անոնց ալ պատուհաններն և դրունքն առին տարին, մինչև իսկ ձեղնոց մարդակներէն ոմանք։ Այնուհետև խոյացան մեր կնիկներուն և աղոց վերայ, և առին նոցա հանդերձներն ու կօշիկներն։ Ութերորդ օրն, երբ գործն ի գլուխ հանած էին, եկին մեզի, մինչ մենք գետին եզերքն էինք, սպաննեցին զՊաղտօ եղբօր որդին և զՊատ. Մելքոն, զերէցն, յանկոյս գետոյն, որովհետև չէին ուզեր ուրանալ զիրենց կրօն։ Լաւ մի մթնեց, բայց եկին լապտերօք, և մենէ 45 երիտասարդ ընտրեցին ասելով թէ կառավարութիւնն կ'ուզէր զանոնք։ Գուշակելով թէ ինչ պիտի պատահէր իրենց, ժամ մի պայմանաժամ խնդրեցին անգգամներէն, և աղօթք արին ու երգեցին, և իրարմէ ներում խնդրեցին, իրենց ծնողաց ձեռք համբուրելով մեկնեցան արտասուալիր աչօք, ոչ ևս ակնկալութիւն ունենալով տեսնել զմիմեանս։ Տանելով զայնս կէս ժամ հեռու անբնակ վայր մի, չարարարք բաժնեցին զնոսա երկեակներու, և սպառնացան մահ անմիջական եթէ չփոխէին իրենց կրօն։ Ամենքըն ալ միաձայն ասին համարձակ. «Մենք չուրանա՛նք պիտի զմեր հաւա՛տք։ Մեք պատրաստ եմք մեռնիլ ի սէր Քրիստոսի։» Միոյն հինգն հնարեցան պրծիլ փախչիլ, իսկ մնացած քառասունքն նահատակեցան

ի սէր Յիսուսի։ Իմ որդիս, փախչելու յաջողած հինգին մէկն էր, 10 կամ 12 օր այրի մի մէջ թաղցուած։ Կրտսերագոյն որդիս, 22 տարեկան, սպաննուեցաւ։

Իսկ մեք գլխիբաց, բոկոտն, հազիւ սակաւիկ մի զգեցած, անցանք ապառաժէ յապառաժ, լեռնէ ի լեռն, ողբ ի բերան, ի խոյզ մեր զաւակաց։

Մի քանի օր այսպէս անօթի անսուաղ թափառելէ յետոյ՝ ամեն երկիւղ ի բաց թողլով գնացինք ի քաղաք (Արաբկեր) օգնութիւն խնդրելու, բայց ի զուր։ Կառավարութիւնն մեզ երկիցս ցորեն յղեց հացի համար, բայց երկու շաբթուան համար կէս հաց կը լինէր մարդ գլուխ, այն ալ չէր ուտուեր։ Շատերն վերջապէս ստիպուեցան յԱկն երթալ պարէն գտնելու, և չնորհակալութեամբ կ'ասեմ թէ Ակնցիք ընդունեցին զմեզ, բայց իրենց շուրջ բոլոր գիւղերէք կողոպտուած են, ո՞ր մէկին օգնութիւն հասցնեն։

Մեր գիւղ վերադարցանք, և խռնուեցանք մնացած տասն տնակներուն մէջ։ Ինչ որ կայ մեզ հասարակաց է։ Դռներ չկան, պատուհանք չկան, հաց չկայ, մինչեւ իսկ չիք և ոչ հողէ ման մի յորում եփէինք բան մի եթէ ունենայինք եփելու բան։ Մեզ չկայ դրամ և ոչ անկողին։ Ծառերու չորցած բներուն վերայ կը քնանամք։ Մենէ ոչ սակաւք հիւանդացան, և իբր տասն մեռան ցրտէն, մերկութենէ և քաղցէ։

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

(Մեր յատուկ թղթակցէն)

Կ. Պոլիս, 13 Փետր. 1896

Ի նպաստ սովի ենթարկեալ հարիւր հազարաւոր մերկ և անպատսպար Հայերու, Պատրիարք Հօր ձեռնարկած հանգանակութեամբ շուրջ 15,000 ոսկի գոյացած և ղրկուած է ցարդ ապահով միջոցներով։ Այս գումարն Թուրքիայէ դուրս գտնուող Հայերէ հանգանակուած է։ Պատրիարք Հայրն դիմած չէ ոևէ Տաճկատանցւոյ, և ցաւալի է որ մայրաքաղաքիս հայ մեծատուններն ինքնաբերաբար չեն յղած իրենց նպաստներն։

Միևնոյն նպատակաւ Անգլիոյ մէջ ձեռնարկուած հանգանակութենէն շուրջ 20 հազար ոսկի հասած և ապահով միջոցներով բաշխուած է։ Դեռ 40,000 ոսկւոյ գումարի մի կը սպասուի։

Այս գումարներ անբաւական են մեծամեծ պէտքերու համար։ Դեռ քանի մի օրեր առաջ Մշոյ Կինճ գիւղախմբի սովամահ կորստեան գուժն հասաւ ի պատրիարքարան, Սրբազան Պատրիարք Հայրն հեռագրաւ 150 ոսկի հասցուց։ Արդեօք որչափ գիւղեր սովամահ կը փճանան և որոց նօթութեան աղաղակն իսկ մեզ չհասնիր։

Հաշտարար Հիւպատոսք վերջապէս մտան ի Զէյթուն, իրենց առաջարկներ դրժուեցան մեր քաջ լեռնցիներու կողմանէ։ Սուլթանն զայս լսելով կը բարկանայ և հրաման կ'անէ որ իւր Սիրելի Օսման փաշան երթայ 30,000 թարմ և կանոնաւոր զօրքով և բնաջինջ ընէ զԶէյթուն։ Օսման տեղեակ լինելով Զէյթունի քաջերու աւիւնին և անոնց բռնած դրից, նախարարաց կը հասկցնէ թէ՝ կրկին պարտութիւն մի շատ վտանգաբեր պիտի լինի Թուրքիոյ համար. և խորհուրդ կուտայ նոցա դեսպանական միջամտութեամբ հաշտութեան հանգիլ։ Նախարարք կը համոզուին և կը յաջողին համոզել Սուլթանն. դեսպանաց հետ յարաբերութեան կը մտնեն։ Դեսպանք բազմիցս ի նիստ կը գումարուին, կը բանակցին հաշտարար հիւպատոսաց և Բ. Դրան հետ և վերջապէս ամսուս 9ին կ'որոշեն յետագայ պայմաններով կնքել հաշտութիւնն.

1. Ընդհանուր ներողութիւն Զէյթունցւոյ և անդ ապաստանողաց։

2. Զէյթունցիք պիտի յանձնեն Թուրք բանակէն առած զէնքերնին։

3. Վեց տարուան յետամնաց տուրքն չպիտի վճարեն։

4. Հինգ տարի ևս տուրք չպիտի տան։

5. Զէյթունի կառավարիչն և ոստիկանութիւնն հայ պիտի լինի։

Սուլթանն և Զէյթունցիք ընդունած են այս պայմաններն։ Զօրանոցի մասին լուր չկայ։

Հաւանականաբար Անգլիոյ Խորհրդարանի ամսուս 11ին բացման առթիւ Հայկական խնդրոյ մասին ըլլալիք խիստ հարցապնդմանց առաջքն առնելու համար Սուլթանն հաճած է ընդունիլ այս պայմաններն։

Տեղական թերթերն դեռ բան մը չեն գրեր առ այս։

Վերջապէս Թուրքերն պիտի յաջողին իրենց 3 միլիոն ոսկւոյ փոխառութիւնն ընել, բայց այդ գումարն 30 առ հարիւր իբր տոկոս զեղջելով, և մի կարեւոր մասալ հին պարտուց յատկացնելով իրենց ձեռքն պիտի անցնի միայն 1½ միլիոն ոսկով պիտի վճարեն ամսական մը և հոգան Բամազանի և Պայրամի ծախսերն։

Երկու ամիս առաջ Սօլզպէրիի խօսած ազդու ճառն հարկադրեց Սուլթանն գրել նորա և պատուիրել որ ուրիշ ճառով մը ըսածներն ետ առնէ, այն ատեն ամեն ոք խնդաց Սուլթանի վրայ և զայն յիմար անուանեց. փորձն ցոյց տուաւ թէ՝ Սուլթանն կարող է եղեր Սօլզպէրիի սանձ դնել և զայն իբր գործի գործածել։ Ամո՛թ Անգլիոյ։

Միւնիր Պէյ, Փարիզու գեսպանութեան կոչուելով կածեց յինիլ ամենակարող. չխրատուելով փարիզու թուրք ուսանողութեան կողմանէ կրած անարգական ցոյցէն և մի քանի ազատական երիտասարդներ Պոլիս ղրկելու անյաջող ձեռնարկէն, փորձեր է վերջերս մի քանի չարագործներ կաշառելով Մինաս Զերազի վրայ յարձակում մ'ընել տալ, և զայն իբր թրքահպատակ իւր ձեռքն անցնելևն. իւր այս փորձն ալ վիժած է, զի Զերազ անգղիական հպատակ է։

Երգնկայէն և Սեբաստիայէն նորանոր ջարդերու կասկածանաց լուրեր կը հասնին։

Այրօր Մայրաքաղաքիս Հայք իբր ազգային տօն փակած են իրենց խանութներն.

***

Կ. Պոլիս, 22 Փետր. 1896

Գրեցի արդէն Զէյթունի հաշտութիւնը, պայմաններու մէջ կան նաև Ա. ժողովրդեան յուզիչ հնչակեաններու թուրքիայէ ելքն. Բ. Զէյթունի շրջականերէն ապաստանելու համար անդ եկող 10 հազար անձանց իրենց տեղերն վերադարձն ընդ հսկողութեամբ հիւպատոսաց. Գ. Այս վերադարձողներէն ամեն անոնք՝ որոց գիւղերն հիմնայատակ եղած են, պիտի երթան բնակիլ ի Մարաշ։

Արդէն Կիլիկիոյ շատ մը հայաբնակ գիւղերն նամանաւանդ պատերազմական լաւ դիրք ունեցողներն բնաջինջ ըրած են, և այդ ամայացեալ վայրերն թուրք ցեղեր պիտի հաստատուին և այսպէսով հայ կեդրոններն ցրուած պիտի ըլլան։ Ուստի Զէյթունի քաջերուն ջանքերէն ալ չօգտուեցանք։

Կ'ըսուի թէ Կիլիկիոյ քաջազուններն պաշարէ նեղուելով ստիպուեր են ընդունիլ այս պայմաններն։

Զէյթունցւոց կողմանէ չնորհակալութեան ուղերձ մը հասաւ առ Սուլթանն։

Հայաստանի արեւելեան գաւառներէն ոմանք կը գաղթեն ի Կովկաս և ի Պարսկաստան։ Ռուս կառավարութիւնն գէշ ընդունելութիւն կ'ընէ Թուրքիայէն եկած Հայերուն։ Կեդրոնական Հայաստանէն կ փոքր Հայքէն դէպ ի Պոլիս գաղթն ըսկսած է։ Կիլիկիայէն շատեր Կիպրոս կը անցնին։ Պոլսոյ դրամական տագնապն կը սաստկանայ. սնանկութիւնք իրարու կը յաջորդեն. գործերն անհամեմատաբար նուազած են. ժողովուրդն շատ կը նեղուի։ Կարող դասակարգն ոկսած է գաղթել Եգիպտոս, Կիպրոս և այլուր, շատեր կը ջանան իրենց գործերն վերջացնել և գաղթել։ Աղքատիկ դասակարգն ալ երկրէն դուրս նետուիլ կ'աշխատի, ոմանք Պուլկարիա, Ռումանիա և Յունաստան կ'երթան։

Վերջերս շուրջ 120 թուրք ազատականներ ձերբակալուեցան յորս Ղազի Ահմէտ Մուխթար փաշայի տղան, Նազլը թէքէի էյխ Զագի էֆ.ի տղան, Մեծ Եպարքոսի և ծովային նախարարի անձնական եաւէրներն։

Սուլթանն խիստ գրգռուած է ազատական Մուրատ էֆ.ի դէմ, որ իւր Միզան անուն թերթովն Եգիպտոսէն կը հարուածէ Սուլթանն և նորա կառավարութիւնն։ Վերջերս՝ պալատի մէջ պատրաստուած ընդդէմ Մուրատի յօդուած մի տպեց Իգտամ թերթն։

Սուլթանն իմացած է որ Բամազանի 15ի առթիւ Խրխաի Շէրիֆի ուխտագնացութեան ատեն, թուրք ազատականներն իւր կենաց պիտի դաւեն, և առ այդ բերել տուած են տինամիթներ, ուստի կամք յայտնած է, որ խրխաի շէրիֆն Համիտիէի մզկիթն բերուի։ Շէյխ-իւլ-իսլամն զգացուցեր է թէ՝ դա իսլամութեան համար վիրաւորիչ բան մ'է. ուստի Սուլթանն

հրաման ըրած է քաղաքապետութեան և ոստիկանութեան նախարարութեան որ իւր գնացից ճանապարհի տակն քննուի։ կայսերական հրամանն կը կատարուի և փողոցներն կը փորուի երեք մէթր խորութեամբ, և քննուած տեղերն խստիւ կը հսկեն, որպէս զի յետ քննութեան ոևէ պայթեցուցիչ նիւթ չկրնան զետեղել։

Ամերիկացի Օր. Ֆ. Պարթը եօթն օրէ ի վեր ասա հասած է, կ'ըսուի թէ՝ ինքն անձամբ չպիտի երթայ, այլ իւր ընկերները պիտի երթան բաժնել խեղճ Հայերու Ամերիկայէ բերած նպաստին. թուրք կառավարութիւնն մեծ ջանքեր կ'ընէ շահելու համար իւր ընկերները և նամանաւանդ երկրին լեզուաց տեղեակ առաջնորդներն։

Վերջերս լուր տարածուեցաւ թէ՝ Ազարեան Պատրիարք շնորհակալեաց ուղերձ մը յղած է Սուլթանին. Moniteur Oriental հրատարակեց գայս լուր։ Այս սխալ տպաւորութիւն մ'ըրաւ ոչ միայն համայն Հայոց այլ և Եւրոպացւոց և ազատական թրքերու վրայ։ Հռովմէական հայ հասարակութենէն շատեր անարգական թղթեր ուղղեցին իրենց պատրիարքին։ Ազարեան փութաց բողոքել այդ լուրի դէմ։ Stamboul հրատարակեց այդ լուրի սխալութիւնն. Ազարեան սրբազան չգոհանալով սովաւ գրեց նաև մեր երկաթէ Պատրիարքին և փաստերով նմա ցոյց տուաւ թէ հակառակն գործած է ևն.։

***

Կ. Պոլիս, 9 Մարտ 1896

Ռամազանի 15ն մօտենալուն՝ ոստիկանութիւնն անզգաղ կարծեցեալ Հայերն և Թրքերն ձերբակալեց, այս ձերբակալութիւնք շատցան նամանաւանդ ուխտագնացութեան նախորդ օրն և նոյն աւուր առաւօտուն։ Այսպէսով շուրջ 2,000 Հայեր բանտարկուեցան, և շատեր վախնալով իրենց տուներէն դուրս չելան և փողոցները ամայացան։ Սուլթանն իւր գնացքին համար չորս ճանապարհներ պատրաստել տուած էր. Բերայի, Կալաթիոյ, քարափի, և ծովի։ Ոստիկանութիւնն Սուլթանին գնացից վրայ գտնուած շատ մը խաներ ու խանութներ փակել տուաւ, պատուիրելով նամանաւանդ պատուհաններն իսկ փակ պահել և հանդիսատես չընդունիլ։ Կէսօրին Սուլթանն իւր զաւակն ու Օսման փաշան կառքն առած, անցաւ Կալաթիոյ ճանապարհէն, և երեկոյեան սովորականէն կանուխ վերադարձաւ ծովի ճանապարհով, առանց ոևէ պատահարի, և արդէն լուրջ անձեր աւելի բան մը չէին յուսար թուրք պատականներէն։ Նոյն գիշերն և յաջորդ օրն արձակուեցան քանի մ'օրեր առաջ ձերբակալուածներն։

Սուլթանն համոզուած է թէ Մուրատ, Ռիզա, և նմաններն մեծ պատուհաս մը պիտի բերեն իրեն դէմ. ուստի պատրաստ է նոցա չնորհելու ոչ միայն ներողութիւն և չնորհ դրամական այլևս պաշտօն, չքանչաններ ևն։ Խեղճն դեռ կը կարծէ թէ հայրենասէր մը այդ կարգի խոստումներով կրնայ փոխուիլ։

Հայաստանի ջարդերն առ այժմ դադարեալ կը թուին, սակայն Կիլիկիոյ մէջ դէպքեր կը շարունակուին. Զէյթունի, Մերսինի և Ատանայի մէջ արիւնահեղ շարժումներ եղած են։ Գարնան նորանոր ջարդերու մասին կասկած կայ։

Հայք Հայաստանի երկրագործաց մեծագոյն մասն կը կազմեն, սոքա աշնան չցանեցին և Գարնան ալ չպիտի կրնան ցանել։ Ուստի և դիւրին է հետեւցնել թէ յառաջիկայ տարի մեծ սով մը կ'ըսպասուի։ Կառավարութիւնն ոևէ միջոց ձեռք առած չէ այս վտանգին առաջքն առնելու համար, և ինչո՞ւ աշխատի քանի որ այս պատուհասն իւր ծրագրի նպաստաւոր է։

Պատրիարքարանի և Դրան յարաբերութիւնք բոլորովին ձգտեալ են։ Դուռն ընթացիկ գործերու մասին պատրիարքարանէն ղրկուած գրերու իսկ չպատասխաներ. և միւս կողմանէ, Աբրահամ փաշայի և այլոց միջոցաւ կը պահանջէ որպէս զի Պատրիարք Հայրն ներողութիւն խնդրէ Սուլթանէն յանուն իւր ազգի յուղիչներուն, և չնորհակալութիւն յայտնէ Սուլթանի ներողամտութեան համար ևն. Պատրիարք Հայրն անշուշտ չկրնար ասոնց և ոչ մին ընդունիլ... և վերջապէս լուր տարածուեցաւ թէ Պատրիարք Հայրն պիտի հրաժարի։ Մեծ դուժի մի նման ազդեց այս լուրն. ժողովրդեան ամեն խաւերէ ու դասերէ անհատներ ու պատգամաւորութիւններ ներկայացան նմա, և ծանուցին թէ բոլոր ժողովուրդն ու ազգն իրեն հետ է, և կը փափաքի տեսնել զին-

քըն իւր աթոռին վերայ և իրենց գլուխն, թէ իւր հրաժարումն՝ Պատրիարքութեան և իւր գահուն անկումն կը նշանակէ, թէ պարտի իբրեւ հովիւ քաջ մինչ ցվերջ դընել իւր անձն իւր հօտին վրայ և ն··։ Կ'իմանամք թէ մեր երկաթէ Պատրիարքն այս քաջալերներէ խրախուսեալ աւելի եռանդով իւր հօտի շահերն պիտի պաշտպանէ։

ԾՈՎ

ՄԱՐԱՇԻ ԿՈՏՈՐԱԾՆ

Մարաշէն օտարական տիկին մի կը գրէ հետևեալ տողերն

Հոկտ· ամսուն երբ Մր· Լի կը վերադառնար Ատանայէն ի մարաշ, ի ճանապարհին հայ վարժապետ մի գիշերայն եկած իմաց տուած էր նմա թէ Կ· Պոլսէն հրաման եկած էր սպաննելու զբոլոր Քրիստոնեաներն։ Այժմ յայտնի է թէ վարժապետն ամիս մի յառաջագոյն իրազեկ եղած էր ահաւոր դէպքին։

Հոկտ· 24ի երեկոյին Հայ մի և Թուրք մի ի կռիւ եկին, յորում Թուրքն ստացաւ մահացու վէրք։ Եւ մեռաւ հետևեալ օրն։ Թուրքք յուղարկաւորութենէն ի դարձին երբ շուկայէն կ'անցնէին, մին թելադրեց որ իրենք ալ ի փոխարէն պարտէին սպաննել քանի մի քրիստոնեայ։ Եւ ահա յանկարծ դաշունեցին մսագործ մի և վիրաւորեցին ուրիշներ։ Ասոր վերայ բոլոր խանութներն մէկ ակնթարթի մէջ դափ գուփ զոցեցին, և Հայք թէ Թուրքք փախան այն կողմերէն։ Թուրքք կարծեցին թէ սոսկալի Զէյթունցիք իրենց վերայ վազած էին։ Քաղաքն խռովեցաւ և Միւսիւլմանք զինեալ և սպառնալից լեցուեցան փողոցներն։ Շրջակայքէն ևս անհամար բազմութիւն կողոպտիչներու և սպաննիչներու հոսեցան ի քաղաքն։ Երկու շաբաթ սարսափ տիրեց քաղաքին։ Բոլոր Քրիստոնէից խանութներն փակ մնացին և հազիւ ոմանք երբէք իշխեցին տնէն դուրս ելնել։ Միւթասարրիֆն կրկին և կրկին հրամայեց քրիստոնէից բանալ խանութներն, սպառնալով թէ հեստողք տուգանքի պիտի ենթարկուէին, և թէ բնաւ ո և իցէ վտանգ չկար։

Նոյ· 18ի առաւօտուն սկսան միւսիւլմանք կրակել։ Զօրքերն կողոպտեցին քրիստոնէից տներն ամեն բանէ որ ինչ և իցէ արժէք ունէր, և խաժամուժն ալ աճաղկոտոր արաւ ամեն բան յաջ և յահեակ։ Երեք քրիստոնեայ թաղերու մէջ հրդեհ միանգամայն սկսաւ և սաստիկ ու ընդհանուր կոտորած եղաւ։ Բոլոր տներուն առ նուազն չորս հինգերորդն բոլորովին աւարի տրուեցան, և 277 այրուեցան։

Մեք կը կարծէինք թէ կոտորածին օրըն միւթասարրիֆն անկիւն մի կղկտած մնացած էր ամօթահար։ Ընդհակառակն· հիմա կ'իմանամք թէ ձին հեծած ժուռ կուգար քաղաքին մէջ, անձամբ վերահսկելով դժոխային գործողութիւններուն վերայ։ Այս միջադէպն կը յանձնարարեմք անոնց որոց խելքին չի պառկիր թէ տիեզերաց մէջ դժոխք ալ կրնայ լինիլ։

Ֆրնուզի մէջ ալ ահագին ջարդ է եղած։ Կ'երեւի թէ եօթն գիւղերու ժողովուրդք հոն փախած էին՝ Զէյթուն ապաստանելու մտօք, երբ առաւօտուն յանկարծ պաշարուելով զօրքերէն ջարդուեցան։ Փախստականք կասեն թէ ոչ նուազ քան 4 հազար հոգի սպաննուած են։

ՄԱՀՄԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎՆ

Հնդիկ, Արաբացի և Թուրք մահմետական առաջնորդներէն ոմանք նախաձեռն եղած են հրաւիրելու համաժողով մի ի նկատել իրենց հաւատոյն կենսական եղող ինչ ինչ խնդիրներ։ Ժողովն տեղի պիտի ունենայ 1896ի աշունն, և թէ թանժիէր թէ Գահիրէ իբր տեղի առաջարկուած են։

Քննելի խնդրոց գլխաւորն պիտի լինի այն թէ ինչպէս կարելի է Իսլամ աշխարհն միացնել որ վարդապետական հերձուածներով բաժան բաժան եղած՝ տկարացած է։

Այսպիսի ժողով մի կրնայ յօգուտ կամ ի վնաս ծառայել ըստ առաջնորդաց իմաստութեան։ Եթէ մոլեռանդութիւն և ապստամբական ոգի արծարծեն ընդդէմ այն քրիստոնեայ տէրութեանց որոց ենթարկուած է գրեթէ բովանդակ մահմետական աշխարհն, կրնան ընդհարումներու տեղի տալով աւելի տկարացնել զմահ-

մետականութիւնն։ Բայց եթէ, ընդհակառակն, ճանաչէն քրիստոնէութեան ոյժն և փոխանակ անկախութեան հետամտելու՝ աւելի թոյլտու և կրթասէր ոգի արծարծեն իրենց հետևողաց մէջ, ժողովն կրնայ օրհնութիւն մի լինիլ Իսլամաց շուարեալ աշխարհին։

ՀԱՅ ԱՄԵՐԻԿԱՑԻՈՑ ՎՆԱՍՆԵՐՈՒՆ ԴԱՏՆ

Կ'ըսուի թէ Ամերիկեան քաղաքացի Հայեր անձի և ստացուածոց վնասներ կրած են Հայաստանի և Փոքրն Ասիոյ այլ և այլ կողմերն տեղի ունեցած վերջին ահաւոր կոտորածներու և աւարառութեանց պատճառաւ, և հաւանական է թէ այսպիսի վնասներու համար հատուցում պահանջողներ պիտի լինին, և Ամերիկեան կառավարութեան միջնորդութեան պիտի դիմեն։ Արժան կը համարինք այս կարգի պահանջներու վերաբերեալ օրէնքներէն թարգմանել հետեւեալ հատուածները։

Վնասուց հատուցում պահանջելու համար Ամերիկեան կառավարութեան մատուցուած թուղթի մէջ յիշուելու են.

1. Պահանջի գումարը. վնասն ե՞րբ և ո՞ւր եղած է. կորսուած կամ վնասուած ստացուածոց տեսակը կամ տեսակները և քանակութիւնը. յարակից եղելութիւններըն և պարագաներն կորստեան կամ վնասից որոց համար հատուցում կը պահանջուի. սկզբունք և պատճառները որոց վրայ հիմնելով վնասուց հատուցման պահանջ կը լինի։

2. այն անձին որոյ կողմանէ և որոյ համար որ կը լինի պահանջն, անունն և մականունն ամբողջ գրուելու են։

3. Յիշելու է թուղթին մէջ թէ այն որ պահանջ կանէ՝ է այժմ քաղաքացի Միացեալ Նահանգաց, թէ այս երկիր ծնած է կամ յետոյ ընդունած է քաղաքացիութիւն և ուր կը բնակի այժմ, և եթէ իր անուամբ կ'անէ պահանջ՝ յայտարարելու է թէ քաղաքացի էր այն ատեն երբ կրեց վնաս որոց համար հատուցում կը պահանջէ, և ուր կը բնակէր այն ատեն. իսկ եթէ յանուն ուրիշի կ'անէ պահանջ՝ յիշելու է թէ այն անձն քաղաքացի էր այն ատեն երբ վնաս կրեց, ուր կը բնակէր յայնժամ և ուր կը բնակի այժմ։ և եթէ վնասու տեղի ունեցած ատեն վնասեալ անձն կը բնակէր օտար երկիր, յիշելու է թէ այն ատեն հպատակ էր այս երկրին և կամ հպատակութեան երդում արած էր։

4. Յիշելու է թէ պահանջուած բոլոր գումարն այժմ կամ վնասուած ատեն կը վերաբերէր այն անձին որ հատուցում կը պահանջէ. և կամ ուրիշ անձ ունէր և ունի ամբողջ գումարին կամ մէկ մասին մէջ բաժին. և ով է այն անձն և ինչ է կամ էր վնասու մէջ անոր բաժնին քանակութիւնն և բնութիւնը. և ինչպէս, ե՞րբ և ինչ միջոցաւ այն անձն իւր իրաւունքն կամ շահերն փոխանցած է նմա որ այժմ պահանջ կ'անէ, եթէ երբէք այսպիսի շահուց փոխանցումն տեղի ունեցած է։

5. Յիշելու է նաև թէ այն անձն որ այժմ վնասուց հատուցման պահանջ կ'անէ և կամ այլ ոք որ պահանջուած գումարին ամբողջին կամ մէկ մասին իրաւունք ունէր, ուէ հատուցում ընդունա՞ծ է, և եթէ ընդունած է՝ ինչ՞ գումար, կամ փոխարէն ուրիշ ինչ՞ ընդունած է ի հատուցում այն վնասին կամ մի մասին վնասուց որոց հատուցում կը պահանջէ, և եթէ ևէ փոխարէն ընդունած է, ո՞ւր և որմէ՛ առած է։

6. Ամեն վկայութիւն լինելու է գրաւոր և երդմամբ հաստատուած ըստ օրինաց տեղւոյն ուր վկայութիւն ի գիր կ'առնուի և երդումն կը լինի առաջի դատաւորի կամ պաշտօնէի որ օրինօք իշխանութիւն ունի վկայութիւն և երդումն լսելու, և որ շահ չունի պահանջին մէջ, և չէ փաստաբան կամ գործակալ ուէ անձի որ պահանջին մէջ շահ ունի, և այս պարագաները պաշտօնապէս վաւերացուած լինելու են։ Վկայութիւնն ի գիր առնուելու է այն անձէն որոյ առջեւ կը լինի երդումն, և կամ ի ներկայութեան նորա ուրիշ անձէ մ'որ շահ չունի պահանջին մէջ, և չէ գործակատար կամ փաստաբան ուէ անձի որ շահ ունի պահանջին մէջ. և ի գիր առնուած վկայութիւնն խնամով կարդացուելու է այն անձին առջեւ որ վկայութիւն կուտայ, և անոր ստորագրել տալէն ետքը վաւերացուելու է։

7. Միացեալ Նահանգաց սահմաններէն դուրս ուէ քաղաքի, նաւահանգստի կամ տեղւոյ մէջ վկայութիւնք կրնան տրուիլ այն քաղաք, նաւահանգիստ կամ

տեղը բնակող Միացեալ Նահանգաց հիւպատոսին կամ ուրիշ պաշտօնատարի որ պահանջին մէջ ոևէ շահ չունի և չէ գործակատար կամ փաստաբան ոևէ անձի որ շահ ունի պահանջին մէջ որոյ համար կը տրուի վկայութիւն։ Ուրիշ բոլոր պարագաներու մէջ, թէ ի Միացեալ Նահանգս և թէ օտար երկիրներ վկայութիւնք ընդունող անձին առաջի օրինաց երդումն տալու իշխանութիւնն հաստատուած և ստուգուած լինելու է։

8· Ամեն անձ որ վկայութիւն կուտայ կամ երդումն կ'անէ, վկայութեան մէջ յիշելու է տարիքը, ծննդավայրը, բնակավայրը և գործը· և յիշելու է թէ իւր պահանջին պատճառ դիպաց պատահած ասեն ուր կը բնակէր և ինչ գործով կը զբաղէր· և յայտարարելու է նաև թէ ինչ մասն և շահ ունի այն պահանջին մէջ զոր հաստատելու համար անոր վկայութիւն կ'առնուի· և եթէ ունի ոևէ բաժին պահանջին մէջ՝ որչափ է այն բաժինն, և ինչ պարագայի մէջ իրաւունք պիտի ունենայ առնուլ մասն պահանջէն եթէ պահանջուած հատուցումը ձեռք բերուի։ Յիշելու է նաև թէ ինք գործակատար կամ փաստաբան չէ այն անձին որ պահանջ կ'անէ և կամ ուրիշի որ շահ ունի պահանջին մէջ։

8· Բնագիր թղթեր որ մէջ կը բերուին իբրեւ ապացոյց վաւերացուելու են թէ ստուգիւ են բնագիրք երդմամբ վկայի որոյ արժանահաւատ անձն լինելն ստուգուելու է ըստ օրինաց, իսկ եթէ պահանջատէրը միայն գիտէ եղելութիւնն, առանց երդմամբ կամ խօսքով միայն կրնայ ստուգուիլ։ Թուղթեր որ են ձեռագիր անձի մի որ մեռած է կամ որոյ բնակութեան տեղն անծանօթ է նմա որ պահանջ կ'անէ, կրնան ստուգուիլ ապացոյցով թէ որպիսի անձի ձեռագիր է, նոյնպէս նորա մահն կամ բացակայութիւնն ուրիշ ապացոյցներով։

10· Օտար լեզուաւ ամեն վկայութիւն և թուղթեր ու վաւերագրեր որ իբրեւ վկայութիւն մէջ կը բերուին, անգլիերէն թարգմանութիւնն ալ ի միասին ունենալու են։

13· Եթէ այն անձն որ վերասուց հատուցման պահանջ կ'անէ, ետքէն եղած է Միացեալ Նահանգաց քաղաքացի, իւր քաղաքացութեան թղթոյն վաւերացուած մի օրինակն ալ միասին տալու է։

15· Եթէ այն անձն որ վերասուց համար հատուցում կը պահանջէ փաստաբան ունի, փաստաբանին անունն և հասցէն խնդրագրոյն մէջ յիշուելու են որպէս զի խնդրոյն վերաբերեալ ամեն զեկուցմունք հաղորդուին փաստաբանին կամ գործատարին։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Շնորհակալութեամբ ստացած ենք հետեւեալ հրատարակութիւնները։

ARMENIAN POEMS

(ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔ)

Rendered into English Verse

By

MISS ALICE STONE BLACKWELL

Շատ գեղեցիկ թղթի վերայ տպուած և վայելուչ կազմով, 142 երեսէ բաղկացած հատոր մ'է սա, և կը պարունակէ վաթսուն քերթուած։ Մեր արդի բանաստեղծներէն հետեւեալներն ներկայացուած են այս հատորի մէջ—Ռաֆայէլ Պատկանեան 14 կտորով, Պետրոս Դուրեան՝ 12, Հայր Ալիշան՝ 8, Խորէն Նար-Պէյ՝ 7, Մկրտիչ Պէշիկթաշլեան՝ 4, Միքայէլ Նալբանդեան՝ 2· իսկ Տամատեան (Տալուորիկի կորիճ եմ ես), Թէրզեան, Դօդոխեան, Ռաֆֆի, մէկ մէկ կտորով։ Այլ և այլոց մէջ են Ներսէս Շնորհալին՝ «Առաւօտ Լուսոյ»սին և Գ. Նարեկացին՝ «Յիսուս Որդի»ով։

Այս քերթուածոց մի քանիներն հայերէն բնագիրներուն հետ համեմատելու յատուկ դիտմամբ կարդալով՝ անգլիերէն թարգմանութիւնն շատ ճիշդ գտանք, և այս այնքան աւելի զարմանալի է որքան գիտեմք թէ թարգմանչուհին հայագէտ չլինելով՝ ստիպուած է նախ արձակ բառ առ բառ անգլիերէնի թարգմանել տալ հայերէններն և ապա զայնս վերածել ոտանաւորի։ Օրիորդ Պլէքուէլ ինքն ալ բանաստեղծ գալով՝ յաջողած է այս դժուար գործին մէջ և յաջողած է կատարելապէս։

Տարակոյր չկայ թէ օտարաց մէջ Հայոց մասին զգացուած համակրանքն պի-

ոի աճի այս հատորի միջոցաւ ծանօթանալով մեր ազգային խառնուածին և հանճարին, ինչ որ ազնիւ և հայասէր թարգմանչուհւոյն նպատակն է այս երկասիրութեան մէջ։

Մէկ օրինակի գինն է 1 տոլար 25 սենթ։ Գնել փափաքողք կրնան դիմել առ թարգմանչուհին հետեւեալ հասցէիւ—

MISS ALICE STONE BLACKWELL
3 PARK St., BOSTON, MASS.

History of Armenians in India

MESROB J. SETH

(ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ Ի ՀՆԴԻԿՍ)

Ի ՄԵՍՐՈՊԸԱՑ Ց. ՍԵԹԵԱՆՑ

(Հայերէնի քննիչ ի Համալսարանին Կալկաթայի)

Այս պատմական գործ կարեւոր պակաս մի կը լնու մեր գաղթային պատմութեան մէջ։ Ամեն Հայ հետաքրքիր էր իմանալու թէ Հնդկաստանի հայ գաղութք ե՞րբ և ինչպէս հաստատուած են յերկրին, իբրև վաճառական և դիւանագէտ և իբրև ազատական արուեստից հետեւող ինչ կարեւոր դեր կատարած են անցեալ դարուն մէջ և ի ներկայումս, և ինչ եղած է իրենց յարաբերութիւն Անգլիացւոց հետ։ Այս և այսպիսի հարցմանց գոհացում կուտայ այս լուրջ ուսումնասիրութիւն, որոյ հեղինակն օգտուած է ոչ միայն օտար և ազգային հրատարակութեանց այն կտորներէն որք իւր նիւթ կը չօշափեն, այլ և բաղում անտիպ հայ թղթակցութիւններէ որք տեղի ունեցած են Հնդկաստանի հայ վաճառականաց միջև ի ԺԸ դարուն, ինչպէս նաև հայ գերեզմաններու արձանագրութիւններէն ևն.

Գործն կը բաղկանայ 190 երեսէ և նուիրուած է մեծանուն հայասէր Ծերունոյն Ուիլեըմ Էուարթ Կլատսթոնի։ Հեղինակն մտադիր է այս իւր Անգլիերէն գործոյն հայերէնն ևս հրատարակել։ Կը մաղթեմք որ յաջողի չուտով իրականացունել իւր այդ նպատակ։

Անգլիոյ մէջ բացուած հանգանակութիւնն ի նպաստ հայ թշուառաց հազիւ 30,000 ոսկւոյ հասած է մինչեւ այժմ։

ՀՅԼԵԻ ՀՅԼՔ

Կ. Պոլիս, Մարտ 17. Պարոնայք Վիսթար և Վուտ Ամերիկեան Կամիր Խաչի ընկերութենէն Փոքր Ասիա պիտի մեկնին Մարտ 19ին։ Իսկէնտէրունի համար անցաթուղթ ունին և մտադիր են երթալ ի Զէյթուն։ Դուռը կը բաղձայ որ թուրք պաշտօնեայ մի աղքատացած Հայերու տուուելիք դրամներն բաշխէ, և հաւանական է որ Օրիորդ Պարթըն, Կարմիր Խաչի Ընկերութեան Նախագահ, պիտի հաւանի մի թուրք պաշտօնէի ներկայ գտնուելուն պայմանաւ որ իւր գործիչներն կառավարեն նորա արարքն։ Կ'ակնկալուի թէ այս պայմանին վրայ հիմնուած հրովարտակ մի պիտի ելնէ ընդ հուպ։ Բաշխուելու օգնութեան ամենամեծ մասն պիտի լինի կերակրոյ և զգեստի ձեւին տակ։

Կ. Պոլիս, Մարտ 17. Դուռը պահանջեր է որ Հայոց Պատրիարքն ինքնագիր նամակ մի գրէ ինքգինք խոստովանելով մեղադրելի Հայաստանի մէջ տեղի ունեցած արհաւրաց համար, և Դրան դիտաւորութիւնն է տպագրել զնամակն կարմիր Գրքի մի մէջ, որոյ նպատակն պիտի լինի ցուցունել թէ Բրիտանական Կապոյտ Գրքին մէջ պարունակուածներն Հայաստանի վերաբերութեամբ՝ պիտալ են։

Դուռն նաև ազդարարած է Պատրիարքին թէ իւր պաշտօնավարութեան մէջ շարունակելն պիտի գրգռէ նոր կոտորածներ։ Հայ Պատրիարքն կրնայ հրաժարիլ միայն հաւանութեամբն Ազգային Ժողովոյն զոր Սուլթանն կը վախնայ ի մի վայր կոչել։

Պատգամաւորութիւններ այցելեցին Պատրիարքին կիրակի օրն և երկու շաբթի աղաչեցին զնա որ չհրաժարի։ Խառն Ժողովոյ անդամք ևս սպառնացած են հրաժարիլ եթէ պատրիարքն հրաժարի։ Ռուսիա զօրաւոր ճնշում ի գործ կը դնէ ի ստիպել զ Պատրիարքն որ քաշուի պաշտօնէն։

Լոնտոն, Մարտ 18. Մորնինկ Փոսթ վաղը հեռագիր մի պիտի հրատարակէ Կ. Պոլսէն ասելով թէ Հայոց Պատրիարքարանի գործերն արագապէս կը մօտենան ի

ճգնաժամ։ Ընդհանրապէս կը կարծուի, ըստ այս հեռագրի, թէ Մատթէոս Իզմիրլեան, Պատրիարքն, ձանձրացած և զբղուած է, և վերջապէս պիտի հրաժարի։

Անցեալ տարուան կոտորածներուն և կալ ու կապուտին մասնակցողներէն ոչ ոք պատիժ կրած է ցարդ, այլ, ընդհակառակն, այն ատեն պաշտօնի վրայ եղող պաշտօնեաներէն շատերը յառաջացման և շքանշանի արժանացած են, Մինչդեռ Էսատ Պէյ, որոյ Տրապիզոնի մէջ անցեալ Հոկտեմբերի կոտորածն դադրեցունելու ջանքերն կրկին և կրկին Դրան յիշեցուցուած են դեսպանաց կողմանէ, գաղտնապէս ձերբակալուելով Պոլիս բերուած է։

Կ. Պոլիս, Մարտ 18. Պէյրութի մէջ շըփոթութիւնք տեղի ունեցած են. կ'ասեն թէ 15,000 քրիստոնեաներ փոդոցներուն մէջ թափօրով չրջեր են և Միւսիւլմաններուն ազդ են արեր իրենք զիրենք պաշտպանել։ Սուլթանն վալիին հեռագրած է պահպանել անդորրութիւնն։

Լոնտոն, Մարտ 25. «Թայմզ» վաղն հեռագիր մի պիտի հրատարակէ Կ. Պոլսէն ծանուցանող թէ Ուօշինկթընի օսմանեան դեսպանն և առաջին քարտուղարն ետ պիտի կոչուին ի պատճառս այն համակրութեան զոր Ամերիկացիք կը զդան Հայոց համար։

Կ. Պոլիս, Մարտ 25. Նախարարաց Խորհուրդն որոշած է որ Ամերիկեան Կարմիր Խաչի պաշտօնեայք քաղաքաց մէջ միայն կարենան օգնութիւն բաշխել։ Գիւղերու վերաբերուչներն կարօտեալներն պիտի բերեն ի քաղաք նպաստ ընդունելու համար։ Նաև որոշած է որ Կարմիր Խաչի պաշտօնեայք թուրք նպաստամատոյց Ցանձնախմբին ձեռքով պատրաստուած ցանկերու համեմատ անեն իրենց բաշխումներն և Ցանձնախմբին հետ միասին։ (Եւրոպացիք ինչպէս կրնան հանդուրժել Թրքի այս անդրաւ չարամտութեանց. Խ.)

Զէյթունէն ընդ անգլիական գործիչի հսկողութեամբ արտաքսուած չորս յեղափոխական Հայերն, որք ի Մէրսին պիտի տարուէին և անտի Նաւարկէին արտասահման, դեռ կը մնան ի Մարաշ, Կառավարութեան քով։ Գլխաւոր անձն տկար է և կը վախնայ թէ կը թունաւորուի։

Սուլթանն Իշխան Լոպանովի, Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարի. շնորհեր է Իմթիազի ականակուռ Մեծ ժապաւէնն, և Տիար Նէլիտոֆի, Ռուսիոյ դեսպանին ի Կ. Պոլիս, Մէճիտիէի Մեծ ժապաւէնն։

Սուլթանն հրամայեր է որ տուգանք վճարուի Ճիտտէյի մէջ անցեալ Մայիսին յարձակում կրած հիւպատոսներուն։ Բրիտանական հիւպատոսին կը վճարէ 250 հազար ֆրանք, Ռուսականին՝ 150 հազար, և Ֆրանսականին՝ 100 հազար։

Կ. Պոլսէն միջազգային հայախնամ Ցանձնախումբն հեռագրած է զհետևեալն Նիւ Եորքի Ցանձնախմբին. «Մեր բոլոր դրամն հատաւ. 13 բաշխիչ կեդրոններ օգնութիւն կը խնդրեն. մարդիկ կը մեռնին. ինչ պատասխանեմք։»

Ի պատասխանի, Ազգային Հայախնամ Ցանձնախումբն Մարտ 18 յղեց 10 հազար տոլար հեռագրաւ, և նոյն օրն Հայախնամ Ընկերակցութիւնն ալ յղեց 8հազար տոլար։

Հայախնամ Ընկերակցութեան մասնաւոր մէկ հրաւէրին պատասխանելով՝ 117 Ամերիկուհիներ 100ական տոլար յղած են դոյն Ընկերութեան՝ յօգուտ հայ սովելոց։ Պ. Քիրէչճեան, Ընկերակցութեան քարտուղարն, անխոնջ կ'աշխատի։ Այս ընկերութեան օժանդակ ճիւղ մի կազմուեցաւ նշանաւոր տիկիններով որոց փոյթեռանդն աշխատութիւնն անտարակոյս արագապէս պիտի աճեցունէ հանգանակութեանց գումարն։

Քանատայի Մոնթրիէլ քաղաքի Ուիթնէս թերթն ի նպաստ հայ սովելոց հանգանակութիւն բացեր է. Հաւաքուած գումարն արդէն աւելի է քան 5 հազար տոլար։ Թորոնթոյի մէջ ևս Ցանձնախումբ մի կազմուած է և նոյն նպատակաւ կ'աշխատի։

Թրիպիւնի Փետր. 29 թուոյն մէջ հրատարակուած է ի նպաստ հայ սովելոց եղած հանգանակութեանց չարունակութիւնը ի հաշիւ Ամերիկայի Ազգային հայախնամ Ցանձնաժողովին. այդ ցուցակին մէջ յիշուած են, ի միջի այլոց, նաև Բոնքօրտի հայ գործաւորաց կողմէ հանգա-

նակուած 12 տոլար 13 սէնթն և Պրանսվիլէն Ամերիկացի տիկնօջ մի 5 տ. 60 ս. ն որք Մ. Ս. Գաբրիէլեանի ձեռքով յանձնուած են գանձակալ Պրաուն Պրատըրս և Ընկ.։

Խարբերդէն կը գրեն միսիոնարներն, փետր. 1ին, թէ 100,000 նեղեալներ կան 200 գիւղերուն և քաղաքներուն մէջ որոց մասնաւոր խնամք տանիլ ստանձնած են։ Օրիորդ Սէյմուր և Պուշ իրենց բոլոր ժամանակն կուտան կանանց աշխատանոցի շրջանին, 330 կար կարողներ կը գործածեն, որք աւելի քան 4 հազար ձեռք ներքին զգեստ, շապիկ և վարտիք շինած են և բաշխած։ 281 անկողին և 395 վերմակ տրուած են։

Ռուսչուքէն կը գրեն մեզ փետր. 29 թուականաւ։

Եօթնեկիս քաղաքս այցելեց Տիար Յ. Թ. Գայայեան և խօսեցաւ ընդհանուր միութեան մի գաղափարի մասին. բոլոր կուսակցութիւններն հաճեցան հաշտուիլ և խոստացան սիրով ապրիլ և աշխատիլ գործին յաջողութեան համար։ Իւր խօսքերն շատ լաւ տպաւորութիւն թողուցին բոլոր ունկնդրաց վրայ։

Ապրիլ 4ի երեկոյեան ժամ ութին, Հայքի Խմբագիրն Հայոց մասին պիտի բանախօսէ Նիւ Եորքի Երիտասարդաց Քրիստոնէական Ընկերակցութեան Ֆռանսական բաժնին, իթիւ 114 Ուէսթ 21 փողոց։ Ֆռանսերէն հասկացող Հայերն ալ կը հրաւիրուին ներկայ գտնուիլ այս ժողովոյ։ Յետ բանախօսութեան հանգանակութիւն պիտի լինի ինպաստ հայ սովելոց։

Փրովիտէնսէն կը գրեն թէ Մարտ 14 ի կիրակի օրն հայ գաղթականութիւնն հանդէսով մի տօներ է տեղւոյն գրոց թանգարանին առաջին տարեդարձն։ Ատենախօսութիւններ եղած են և մեծ ոգեւորութիւն արծարծուած է հանդիսականաց մէջ։ Ի զարգացումն թանգարանին իբր 50 տոլար նուիրատուութիւն եղած է նոյն օր։

Հասցէ

Editor of "HAIK" 202 West 23d St.,
U. S. America.

կամ Redaction de la Revue "HAIK" են

ՊԱՅՄԱՆՔ

Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
երկու տալեր կամ տասն Ֆրանք
կանխիկ

Սահակ Երէցեան, Ակնցի, յԱմերիկա կամ այլ ուր ո՞ր քաղաք և ո՞ր թաղ կը գտնուի հրաւէր կը կարդամք սոյն լրագիրն ընթերցող համայն ազգայնոց որ եթէ գիտեն յիշեալին ուր լինելն հաճին մեր հասցէին տեղեկագրել որով մեծ բարիք մի ընծայած կը լինին յիշեալին դժբաղդ և կարօտակէզ մօրն։

A. Darhanian,
1802 E. Main St., Richmond, Va.

Ս. Ռ

ԲԱԺԱՆՈՐԴՍ "ՀԱՅՔԻ"

Բաժանորդագներն կրնան յղուիլ հետեւեալ կերպերով։

Ամերիկեան տոլար թղթադրամ նամակի ծոցով։

Ամերիկեան փոսթ-սթէմփ նամակի ծոցով.

Մընի Օրտըր.

Օտար երկիրներէն դրամ յղելու հետեւեալ կերպերն կան.

Մընի Օրտըր.

Քրէտի Լիօնէի փոխանակագիր.

Ֆռանսական դէմպռ-բօստ.

Դրամ պարունակող նամակներն ապահովագրել պէտք է։

Կը խնդրենք յատկապէս որ յիշեն Հայք ուղողներն թէ բաժանորդագրութեան մեր պայմանն է կանխիկ վճարում.

Կը խնդրեմք որ մընի օրտըրի կամ մանտա տը փօսթի միջոցաւ խմբագրութեանս դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցունելու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ.

ԿԻԼԻԿԻԱ

ՓԱՐՁ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐԴԻ ԿԻԼԻԿԻՈՅ

Մատենադարան «Արաքսի»: Պետերբուրգ, 1894, 400 երես, բազմաթիւ պատկերօք: Գինն է մէկ րուբլի 25 կոպէկ:

Այս գործ յոյժ գեղեցիկ տպուած և կարի հետաքրքրական է:

ԱՐԱՔՍ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԷՍ

1894-1895. Գիրք առաջին: 248 երես է բուն հանդէսն, ընտիր պարունակութեամբ, և 182 երես՝ գեղարուեստական բաժինն:

Այս պատուական հանդիսի տարեկան բաժանորդագինն է միայն երկու տոլար (երկու համորին համար): Եւ սակայն բաժանորդագրութիւնք կանխիկ չեն վճարուիր, խմբագրութիւնն սաստիկ նեղն ինկած և պիտի դադրեցունէ եթէ կանխիկ վճարմամբ բաւական բաժանորդ չունենայ:

Այս ամենն կը ցուցնեն թէ մեր մէջ ազգային կրթութեան և վերածննդեան համար եղած ջանքերն ինչ դժուարութեանց կը հանդիպին, և թէ Հայոց «ազգասիրութիւնն» որքան խակ է դեռ...

Արաքսի հասցէն է

Simeon Goulamıriantz,
St. Petersbourg, Russie.

Նոյն հասցէին պէտք է դիմել ԿԻԼԻԿԻԱ գիրքն գնելու համար ևս:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ

Հանդէս կիսամսեայ

25րդ տարի

Տարեկան բաժնեգինն է, օտար երկրաց համար 17 ֆրանք կամ 3 տոլար 40 սէնթ: Հասցէն է—

M. M. MAMOURIAN,
Smyrne. TURQUIE

Լ'ԱՌՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻԱ

Ամսօրեայ

Տարեկան բաժանորդագինն է 3 տոլար 75 սէնթ: Հասցէն է—

33 De vere Gardens W, LONDON, ENG.

ԲԱԶՄԱՎԷՊ

Ամսօրեայ

Տարեկան բաժանորդագինն է 10 ֆրանք, (երկու տոլար): Հասցէն է—

Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ԺԱՄԱԳՈՐԾ

Պատիւ ունիմ ծանուցանել թէ ճարտարապետ չորեքշաբթ մեքենայից լինելով, կը զբաղիմ նաև ժամագործութեամբ երեկոյներն ժամ 8էն մինչև 11 ժամացոյց նորոգելու:

Նաև կը գտնուին քովս ամեն կարգի նոր ժամացոյցներ ալ աժան գներով: Անոնք որ կը փափաքին աղէկ ժամացոյցի մը տէր ըլլալ առանց որս լինելու խաբերայ Հրէյից և այլ ազգաց որք կրկնապատիկ գինն կը պահանջեն, կրնան դիմել մեր հասցէին:

MISAK M. PHILIP,
25 Monroe St. New York.

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ա. Գ. ի տպարանում, 1892ին: Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձևերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, բարևէ, քալէ, վազէ, չրջան անէ, սուին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, չարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.: Երկրորդ մասում կ'աւանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ:» Այս գիրքն կարդալ և ըստ անոր իրենք զիրենք մարզել պարտին երիտասարդք: Գին 50 սէնթ:

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին. կ'ընդունի մինչև անգամ հինգ սէնթ: Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև կէս օրէն վերջ 4: Շաբաթ օրերն 9էն մինչև 1:

Հասցէն է 314 Մէյն փողոց:

Ed. LEGOLL
ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ. Էվինիու Նիւ Եորք

26դ և 27դ. փողոցներուն միջև

Դեղագրեր կը շինուին խնամով

T. HENRY DEWEY,

ՓՈՐՁԱՌՈՒ ԱՄԵՐԻԿԱՑԻ ՓԱՍՏԱԲԱՆ

Եւ իւր Օգնական

SARKIS C. KEBABIAN,

ԵԷՅԼԻ ԸՆԹԱՑԱՒԱՐՏ

Կը հոգամք քաղաքային և միջազգային դատեր: Կուտամք օրինական խրատ: կրնայ ամէն ոք մեզ դիմել գործոյ համար կատարեալ վստահութեամբ: Հարկ է, իւր օգտին համար, որ դիմողն առաջուց յստակ որոշէ ասելիքն և եթէ բերէ հարկաւոր թղթեր:

ՁՏիար Քէպապեան ս՛   պէս տեսնելու լաւագոյն ժամանակ   ամ 1—5 յետ միջաւուր:

Պաշտօնատեղի և Հասցէ,

48 Wall St., New York, N. Y.

ՆԻՒ ԵՈՐՔ

ՃԷԹ ՃԸՈՒՁ

անունն է Ուստըրի Ֆրոնթ փողոցին մէջ

գտնուող թիւ 14 վաճառատանն,

ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց,

ձեռնոց, չապիկ, օձիկ, փողկապ.

ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է ասի ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են:

MORRISON & Co.

ԴԵՐՁԸԿ

106 Fulton St., New York.

Ամառուան համար ընտիր ձեռք մի զգեստ, ձեր վերայ յատկապէս ձևուած չափուած կը շինեմք 16 տոլարի, իսկ առնազգեստ (փանթոլոն) 4 տոլարի: Ձեւին կատարելութիւնն ուճշդութիւնն կերաշխաւորենք:

BUSH & Co.

Պ Ո Ւ Շ Ե Ւ Ը Ն Կ.

(Հաստատեալ ի 1849)

65 Front St., Worcester, Mass.

Դեղագիրք խնամով կը պատրաստուին

և չափաւոր գնով

FACTS

ABOUT

ARMENIA

ԻՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Այս է անունն անգլիերէն տետրակին որ Հ. Հ. Դաշնակցութեան կողմէն հրատարակուեցաւ:

Տետրակն կը պարունակէ Կլատսթոնի մեծ ճառն խօսեցեալ ի Չէսթըր, և Տիլօնի յօդուածն՝ Քօնթէմփորէրի Րիվիւէն արտատպուած: Այս յօդուած մինչև ցարդ Հայոց վերայ գրուածներուն ամենազօրաւորն և ամենակատարեալն է, զոր կարդացող օտարական մի, որքան ալ գուլ խղճի տէր լինի կը կատղի Թուրք կառավարութեան դէմ: Հայրենակիցք պէտք է փութան տարածել այս տետրակ օտարականաց մէջ:

Գին օրինակին է 20 սէնթ: Առ նուազն 50 օրինակ մէկէն գնողին կը տրուի 15 սէնթէն:

Դիմել ՀԱՅՔԻ խմբագրատունն:

ՆԵՐԿԱՅԻՐՈՒԹԻՒՆՔ

Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

(Այս գրքերն գնելու համար գրել կամ դիմել Հայքի խմբագրատունն :)

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան ։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստն արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ ։ Բսան և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ՚ ճառախօսութեան .— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈՂՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՇԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք ։

Գինն է 2ուկէս ֆրանք կամ 1 րուբլի (50 սէնթ ։) Ութածալ 120 երես ։ 1891

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է ։ Հետեւապէս հարցն այն չէ թէ կարօ՞տ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ ։ Զերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն ։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զլինեալ աջ մեր բարձրացունեմք․ Ոչ թէ բան մ'առնելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն ։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես ։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած ։

ՀԱՅ ԲՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմակերպման առաջնորդող սխալ քայլերըն պատմաբանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կարենայ իբրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն ։

Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 61 երես ։ 1888

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՒԱՆԱՆՔ

Հայ ցեղին հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային խոէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են ։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես ։ 1894

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆՔ

Այս տետրակ հաւաքածոյ մ'է հեղինակին ազգային ատենախօսութեանց եօթին, որք են ՁԷՅԹՈՒՆ, ՍՈՒՐ, ՀՆԱՐ Է, ԴՐԱՆ ԳԱՂՏՆԻ ՇՐՋԱԲԵՐԱԿԱՆԸ, ՁԱՅՐԿ, ՆԵՐՔԻՆ ՎՏԱՆԳՔ, ՅԱՂԹՈՒԹԻՒՆ ՕՐԷՆՔԻ ՈՒԺՈՎ ։ Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 71 երես ։ 1893

«Հայքի» նախորդ տարիներն կը վաճառուին հետեւեալ գներով .

Ա. տարի, 1 տոլար 50 սէնթ կամ 7.5 ֆր.
Բ. ″ 2 ″ կամ 10 ֆրանք ։
Գ. ″ 2 ″ ″ ″ ″
Դ. ″ 2 ″ ″ ″ ″

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ